

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի: Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիցուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոզրամայով: Մերը կը ստանանք սեփական ձեռնագրերով: «ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի: Գրվել «ՄՇԱԿ»-ը կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բազմաբնույթ փողոցների անկիւնում, Թամաշիւի տանը): Կայտարարութեան ուրիշ քաղաքները «ՄՇԱԿ»-ը գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԻՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արհեստագիտական դպրոցը Շուշու. Նամակ Աղստաֆայից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանական քաղաքականութիւնը. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀՆԱՍԳԻՆՆԵՐ.— ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայր Ղեկնող վարդապետ Ալիշանի յօդուկները.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՀԵՏԱՍԳԻՆՏԱԿԱՆ ԳՐՈՒՅ ՇՈՒՇՈՒՄ

Կովկասեան Բարեգործական ընկերութեան ամսին 24-ին կայացած ընդհանուր ժողովում կարգադրեցաւ ընկերութեան Շուշու ճիւղի մի դրուծիւնը, որի մէջ տեղական վարչութիւնը յայտնում է, որ ցանկութեան ունի Շուշու մի Արհեստագիտական դպրոց հիմնել աղքատ դասակարգի աղջիկներին համար, և այդ նպատակով Թիֆլիսի վարչութիւնից 300 ռուբլի նպաստ է խնդրում: Շուշու վարչութիւնը, որքան հասկացանք նրա գրութեանից, արհեստագիտական դպրոց հիմնելով նպատակ ունի այդ դպրոցով ներպատեղ քաղաքի աղքատ դասակարգի աղջիկներին նպատակայարմար կրթութեան և փոքր ի շատէ անկախ ապրելու գործին, և դրա հետ միասին՝ դրանով կամենում է իր գործունեութեան մի շօշափելի կայացոյցը դնել տեղացի անտարբեր հայ հասարակութեան առաջ, որը իր անհոգութեամբ մահացու հարուած է հասցնում Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղին: Վարչութեան այդ ձգտումը, պէտք է խոստովանել, միանգամայն արդարացի է, և երեկ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅՐ ՂԵԿՆՈՂ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԻՇԱՆԻ ՅՕՐԵԼՆԱՆԸ

Մեծ ուրախութեամբ կարդացինք «Մշակի» № 7-ի մէջ այն լուրը, թէ Վեհեցիայի մէջ շուտով պէտք է տօնվի հայր Ղեկնող վ. Ալիշանի յիսնամեայ գրականական գործունեութեան յօդուկները: Գեռ ևս անցեալ տարի, օգոստոս ամսին, մի բարեկամի նամակով մենք տեղեկացել էինք, թէ Վեհեցիայի յարգելի Միսիթարեան Միաբանութիւնը մտադրութիւն ունի տօնել վերապատելի հօր յիսնամեայ ջանասիրութեան յօդուկները: Շատ ցանկալի էր, ի հարկէ, որ Միսիթարեան յարգելի միաբանութիւնը զբաղանապէս պատասխանելով հասարակաց հետաքրքրութեանը, իր «Բարձրակէպի» միջոցով բարեհաճէր մանրամասն

ժողովը մի առանձին համակարգով կը վերաբերվէր դեպի Շուշու ճիւղի այդ մտադրութիւնը: Բայց, տարաբաղաբար, ժողովականներից շատերը՝ իրանց յայտնած մտքերով, և արտայայտած հայացքներով՝ բոլորովին այլ կերպ նայեցին այդ հարցի վրա: Նախ պէտք է գիտնալ, որ Շուշու ճիւղի ցանկութիւնը՝ բնակ մի արհեստագիտական դպրոց՝ համակարգի է հէնց այն տեսակետից, որ նա աշխատում է այն տեսակ հիմնարկութիւն բանալու մասին, որի նմանները մեզ մտ թիչ են, և համարեա թէ չը կան, և որոնք մեծ դեր պէտք է կատարեն մեր ժողովրդի մտաւոր—նիւթական բարեկեցութեան հարցում: Կարելի էր սառնութեամբ նայել Շուշու ճիւղի առաջարկութեան վրա, եթէ նա կամենար հիմնել մի սովորական ծխական դպրոց, ինչպիսին որ պահում է Թիֆլիսի կանանց ընկերութիւնը, և այն դէպքում կենտրոնական վարչութիւնը միանգամայն գուցէ իրաւունք կունենար մերժելու կամ սպասելու, որ Բարեգործական ընկ. ընդհանուր ժողովը ընդունէր այդ խնդիրը: Բայց այստեղ հարցը մի այնպիսի դպրոցի մասին է, — եթէ ի հարկէ այդ դպրոցը բացվի և պահվի այնպէս, ինչպէս որ պէտք է նա լինի,—որի գոյութեանը պէտք է նպատակ, որի նմանները պէտք է դնել ժողովրդի առաջ: Վարդապետի զիջումը քաղաքում՝ այնպիսի մի դպրոց հարկաւոր է հէնց այն պատճառով, որ դա կարող կը լինէր կանոնաւորել և ակել արդիւնաւէտ կացութեանը այն գեղեցիկ ձեռագործները, և անպիսին մի քանի արդիւնաբերութիւնները, որոնք հէնց այժմ էլ կազմում են այդ նահանգի իրական դասի պարագայում զիջւած մասը:

Միանգամայն ճիշդ է ընդհանուր ժողովը մէջ մի քանի անձանց կողմից յայտնված այն կարծիքը, թէ բազմապէս Շուշու ինքը կարող է պահել

տեղեկութիւն տալ այդ ցանկալի ճանդէսի կատարման և մտադրութեան մասին ընդհանրապէս, նոյնպէս և յարգելի վարդապետի կենսագրութեան հետ ծանօթացնելը մեզ: Յանկալի էր նոյնպէս, որ Վեհեցիայի յարգելի միաբանութիւնը այդ դէպքում զոհէր իր մասնաւոր հայացքները ընդհանուր գաղափարի իրազորման համար, որպէս զի Միսիթարեան այդ երկու անշատված միաբանութեանց մէջ, վստահ գաղափարի և արժանանաց գնահատութեան ապացոյցը կենդանի օրինակով կարող լինէին պատկերասալ հայ ազգի առաջ, իսկ ազգը կարող լինէր պարծինալ երջանկայիշատակ Միսիթար հօր ներկայ աշակերտաց համարաշխութեամբ, սիրով և զիտակցութեամբ:

Բացի դրանից, ցանկալի էր նոյնպէս, որ յօդուկների կարդալով մասնախումբը հրապարակաւ յայտնէր թէ այդ յօդուկները սրբալի գաղափարով է ներշնչված. յարգելի հայր Ղեկնող Ալիշանի յիսնամեայ ջանասիրութիւնը պէտք է տօնել, թէ նրա գրականական ՅԱ-ամեայ գործունեութիւնը, որով պարգապէս որոշված կը լինէր

իր համար մի արհեստագիտական դպրոց, և որ Թիֆլիսի վարչութիւնը չը պէտք է օգնէ Շուշու, որտեղ կան շատ հայեր, և շատ էլ հարուստ հայեր: Բայց չէ որ տեղական ճիւղն էլ հարուստ հայերից շատերի աններելի անտարբերութեան դէմ է բողոքում, և Արհեստագիտական դպրոց հիմնելով ցանկանում է շօշափելի կերպով ապացուցանել այն անտարբեր հասարակութեանը, որ ընկերութիւնը շատ գործ կարող է կատարել, եթէ հասարակութիւնը չը զլանայ իր օգնութիւնը: Շուշու հասարակութեան անտարբերութիւնը դէպի իր հասարակական գործերը յայտնի է. այդ անտարբերութեան հնորոնով ոչ թէ նոր գործերը չեն աշողվում այնտեղ, այլ և եղած գործերը և հիմնարկութիւններն էլ մասնաւոր են անվերջանալի գեղձուկների և անտէրութեան. ուստի չէ յայտնի Շուշու դպրոցների ողորմելի դրութիւնը, ուստի չէ յայտնի դպրոցապատկան կարուածների անխնամ վիճակը. վերջապէս ուստի չէ յայտնի այն ս ա ու ն ու թ իւ շ ը, որով այդ ս ա ու ն քաղաքի բնակիչները վերաբերվում են դեպի ամեն մի հասարակական նոր ձեռնարկութիւն և հաստատութիւն... Բարեգործական ընկերութեան Շուշու տեղական ճիւղը՝ դուցէ կարող կը լինի մի քանի տարուց յետոյ յաղթել այդ անտարբերութիւնը, բայց առայժմ նա կարողութիւն ունի մի օգնութեան՝ որ և իցէ գործ կատարելու համար, և այդ օգնութիւնը պէտք է տայ Թիֆլիսի կենտրոնական վարչութիւնը, որը մինչև այժմ միշտ սովոր է եղել զանազան իր ա ու ն զ ն եր քանցեցնել տեղական ճիւղերի վրա, առանց որ և իցէ պարտաւորութիւն յանձն առնելու: Մենք միանգամայն ընդդէմ ենք և այն մտքին, որ Թիֆլիսի վարչութիւնը անընդհատ կերպով օգնութիւն տար Շուշու ճիւղին. բայց ուրիշ բան է մշտական օգնութիւն, և ուրիշ բան է ժամանակակաւ օգնութիւն, որով միայն կարելի է ոտքի կանգնեցնել մի այնպիսի օգտուէտ գործ, որպիսին Արհեստագիտական դպրոցի հիմնարկութիւնն է Շուշուում: Եւ այդ պատճառով չենք կարող այդ բանի վրա չը դարձնել Բարեգործական ընկերութեան Թիֆլիսի խորհրդի ուշադրութիւնը, որին յանձնված է որոշել, 300 ռուբլի նպաստ տալը կամ չը տալը: 300 ռուբլին մի մեծ գումար չէ. և այդ գումարը տալով խորհուրդը կարող է յայտնել Շուշու ճիւղին, թէ դպրոցի հիմնարկութեան երկրորդ տարին կը տըրվի ոչ թէ 300, այլ օրինակ 200 ռուբլի, երրորդ տարին կը տըրվի 100 ռուբլի, և արդէն դրանից յետոյ տեղական վարչութիւնը պէտք է կարողանայ իր սեփական ոյժերով պահպանել Արհեստագիտական դպրոցը, յոյս չը դնելով կենտրոնական վարչութեան վրա: Եւ մենք համոզված ենք, այն ժամանակ ճշմարիտ որ Արհեստագիտական

հասարակական յարգանաց նպատակը և սահմանը: Անհամբերութեամբ սպասելով այդ գեղեցիկ և համակարգի մտադրութեան իրազորմանը, այժմեանից չէ կարելի ուրախութեամբ չը լինել հայր Ղեկնող վ. Ալիշանի երկարամեայ գրականական—գիտական գործունեութիւնը, նրա անխնայ աշխատասիրութեան պայծառ պտուղները հայ գրականութեան համար, լիպպէս հաւաստի լինելով, որ հայ ազգը զիտէ գիտակցօրէն գնահատել, քաջալերել իր հարազատ մտաւոր աշխատողին, որի երկարամեայ գրականական—գիտական աշխատութիւնները ամենայն իրաւամբ բըռնել են մեր ժամանակակից հայ դպրութեան պատմութեան էջերում ամենապատուաւոր տեղը և քաջածանօթ են նաև ևւրօպական գիտական աշխարհին: Հայր Ալիշանի, այդ պատկառելի ծերունի հասակաւ հօր հռչակը, որպէս քաջ հայրենագէտի, որպէս ազգասէր բանաստեղծի, որպէս անվատակ և բարեխղճ ուսումնականի, այլ և որպէս հայ եկեղեցականի արդէն յայտնի է հասարակական կենտրոնը և գրականութեամբ փոքր ի շատէ

դպրոցը կարող է պահպանվել տեղական ոյժերով, բանի որ այդ ժամանակ, երբ դպրոցը իր ընթացքով կը գրաւի տեղացի հասարակութեան զգուշութեան միջոցները, կարող կը լինի իր գոյութեան միջոցները նոյն իսկ իր մէջ գտնել:

ՆԱՄԱԿ ԱՂՏԱՔԱՅԻՅ

Յունվարի 26

Մեզանից 9 վերստով հեռու Ղաղաթի գաւառական բանտից նորերումս փախել է Խորաֆիլ բէկ անունով մի յայտնի աւաղակ Այդ մարդը մեր երկրում անցեալ տարվայ իր մի շարք սըխրագործութիւններով յայտնի Քեարամ աւաղակապետի նշանաւոր հակառակորդներից մէկն է. նա սպանել է այդ վերջինի հօրը և մի քանի նրա մերձաւոր բարեկամներին: Այդ պատճառով էլ կառավարութիւնը կալանաւորել էր նրան. բայց Քեարամը, որ այն ժամանակ դեռ աւաղակ չէր, դրանով բաւական չէ եղել. նա էլ իր հերթում սպանել է Խորաֆիլ բէկի մարդկիներէց և փախտական լինելով սկսել է իր աւաղակային կենտրոն: Բայց այսօր, երբ իր այդ հակառակորդը աղաւթված է, երբ նա զոնվում է հրապարակի վրա, ամենքն էլ հաւատացնում են որ Քեարամը կրկին կը գայ: Ղաղաթի նահանգի թուրք ազգաբնակիչներն մէջ երկուսն էլ ունեն նշանաւոր հեղինակութիւն, երկուսն էլ ունեն բազմաթիւ կրօնակիցներ, և հէնց այդ է պատճառը որ նրանք այդքան աջող կերպով կարողանում են փախել արդարութեան ձեռքից:

Այս ամսվան սկզբներում այստեղի կայարանից եւ ուղարկում եմ Թիֆլիս Մէլիք-Յակոբեանի հասցէով 44 արկղ չամիչ, երկաթուղու կվիտանցիան Թիֆլիսի փոստատան մէջ գործանում է մի վրացի և տանում ծախում է շատ չնչին գնով Թիֆլիսում յայտնի մի հայ վաճառականի վրա: Չը նայելով որ երկաթուղու վարչութիւնը իրաւունք չունի անուանական ապրանքներ ամեն պատահողին յանձնելու, բայց և այնպէս այդ ապրանքը ստացվում է կայարանի մէջ կօմիսիօներութեամբ պարագող մէկի միջոցով և ուղարկվում վաճառականի ամբարը: Երեւի մտածելով որ չամիչի «մազանքան» կարող է իջնել, պարոն վաճառականը ներթափան է քաշում օր առաջ ուսը անել այդ ապրանքը ծախելով Արմենասիլի բազարի մի ուրիշ հայ վաճառականի կանի վրա կի ս ա գ ն ո լ և, վերջապէս, ի լրումն ամենայն չարեաց այդ վերջինն էլ սարանքը յանձնում է երկաթուղուն Օղէտա ուղարկելու: Բայց բարեբաղաբար ապրանքատէրը պատահմամբ նկատելով իր մարկան արկղների վրա և մեղանից տեղեկութիւն ունենալով, ժանդարմի մի-

հետաքրքրվող իւրաքանչիւր անձին, ևս առաւել նրանց, որոնք ընդունակ են գնահատել և խոստովանել բարին և կատարեալը, վստեղ, ճշմարիտը և առաքելին,—առանց կրօնական նեղ հայացքի: Բայց ո՞վ է հայր Ղեկնող վարդապետ Ալիշանը: Այդ պատկառելի գիտական հայրը, Վեհեցիայի Ս. Ղաղարի հայ-կաթօլի միաբանութեան ուսուցիչն ու ընկերակցը մի վարդապետ է, պանծալի Միսիթար Սերաստացու արժանաւոր աշակերտ և նրա հոգին ու միջոցը ունեցող մի պատկառելի անձնաւորութիւն, որ կամաւորապէս հրաժարվել է անձնականութեան, ետական աշխարհից և իր ամբողջ կենտրոնը նուրիւր է հայ ազգի հայրենագիտութեան և բանաստեղծութեան համար: Նրա մինչև այսօր յոյս տեսած բազմաթիւ եղական աշխատութիւններն արդէն բաւական են նրա հռչակը և պատիւը պատկառելի և երախտագիտական կացութեանը: Հայ ազգի մէջ, իսկ ևւրօպական բազմաթիւ գիտնական և ուսումնական ընկերութեանց մէջ նրա վաստակած նախանձելի պատիւը, անդամակցութիւնը և բարձր դիրքը

դէս դպրոց, որովհետեւ Գերմանական այդպէս է անուամբ Եւրոպայում այժմ տիրապետում է միլիտարիզմը և այդ էլ Գերմանական շնորհով:

Գերմանական, կամ անկի ճիշդ է ասել Բիսմարկի կուսակցութեան քաղաքականութեան այդ տիրապետութիւնը, արդէն յայտնի է, որ շատ թանկ է նստում Եւրոպային: Այդպիսի քաղաքական և սոսակական դրութեան մէջ Եւրոպան երկար մնալ չէ կարող. այդ լարված դրութիւնը շատ մուսլ ասպարէզ է պատրաստում ամբողջ քաղաքակիրթ աշխարհին: Եւ այդ պատճառով հասկանալի է, թէ ինչու այդ անընական դրութեան դէմ անդադար բողոքներ են լսուում նոյն իսկ հասարակական կարծիքի կողմից: Այդ անընական դրութիւնը փոխելու միակ միջոցը գերմանական գերիշխանութեան ոչնչացնելն է, որը ներկայումս արդէն շատ բարձր աստիճաններ է հասել: Այդ քննչվելու, և ինչ միջոցներով կարելի ոչնչացնել այդ տիրապետութիւնը, որը ոչինչ բերական հիմք չունի, և հիմնված է միմայն զի պիտի օժտուի անհասկանալի փրատ Գրան ոչնչացնելու համար երկու կարճ միջոց կայ. առաջին ճանապարհը հետեւան է. կարգել Գերմանիայի դէմ մի գործը դաշնակցութիւն մի քանի պետութիւններից և այդպիսով թուլացնել նրա գերիշխանութիւնը. երկրորդ ճանապարհը ուղղակի տանում է պատերազմի դաշտը, որտեղ Գերմանական վայր կը դնի գերիշխանութեան իրաւունքը, եթէ միայն հարուած ստանայ հակառակորդների կողմից: Այդ երկուսի մասին էլ իշխան Բիսմարկ անդադար հոգում է. նա չէ թող տալիս, որ եւրոպական պետութիւններին մէջ դաշնակցութիւն կազմվի, իսկ պատերազմի դաշտի համար նա այնպիսի զօրք է պատրաստում և այնպիսի պատրաստութիւններ է տեսնում, որ սարսափ է զգում ամեն կողմի իսկ ինչ կը լինի այդ բոլորի հետեւանքը:

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻԱՅԻՆ
Կ. Պօլիս, 18 յունուարի

Արդէն նախորդ նամակաւ ընդարձակ տեղեկութիւններ տուած եմ ի մասին այն կարևոր տեսակցութեանց, ոչ տեղի ունեցան անցեալ շաբթուան մէջ: Մասնաւոր մեծ կարևորութիւն մը ստացած է մեր ազգային շրջանակներու մէջ Վահան էֆէնդիի Պատրիարքարան դայն: Նոյն իսկ կայսեր հրամանակն եկած էր: Վահան էֆէնդիի կողմէն էր ի պատրաստ արձանի, որ երկը ժամու չափ կենտրով, ընդարձակ տեղեկութիւններ հաղորդած էր Սուլթանի սենեկակալերին: Սենեկակալեան այդ տեղեկութիւններն կայսեր ներկայացնելով փոխարքած հրամաններ ընդունած էր և հաղորդած Վահան էֆէնդիին: Վահան էֆէնդիի գալով ի Պատրիարքարան յայտարարած էր Պատրիարքին թէ՛ կայսրը կատարելով վտտակութիւն ունի հայ ազգին նկատմամբ և թէ՛ մի քանի անձերու ձերբակալումն ու քննութեան ենթարկումը պէտք չէ նկատուի իբրև անվստահութեան նշան մը կայսեր կողմանէ առ ազգին կայսրը կը պատժէ յանցաւորը, ըսած է Վահան էֆէնդի, ով որ ալ լինի. անոր անուան թող ըլլայ Անմէր, Խանի, թէ Գրիգոր. կայսրը կը պատժէ յանցանքն և ոչ թէ ազգը: Վահան էֆէնդի յանձնարարած է Պատրիարքին մնալ իւր աթոռին վրայ:

Պատրիարքն ալ իրաց միճակին վրայ պէտք եղած տեղեկութիւնները տալով, Վահան էֆէնդի վերադարձած է ի պալատն և հաղորդած է ինչ որ ըսած և ինչ որ լսած է:

Կրօնական և ֆաղաքական ժողովներն հաւանօրէն այս ուրբաթ աւուր նստին մէջ հանդիսարար կերպով պիտի յայտնեն իրենց շնորհակալութիւնն առ կայսրն:

Երկու օր է որ կը հաւատեն թէ՛ հրաման իրկուած է Վան այլ և ձերբակալութիւններ չընել և արդէն ձերբակալեալներն ազատ թողուչ Պօլիս արժուէի պալատան մէջ կազմուած յանձնաժողովն ալ արդէն ցրուած է կրսն և ձերբակալեալը պիտի արձակուի: Այս լուրերն իբր ստող կը հաղորդուի, սակայն տակալին հաստատ կերպով ոչինչ յայտնի է, միայն թէ հաւանական է որ կառավարութիւն անկի հատարար քաղաքականութեան մը հետեւի հայոց նկատմամբ:

Այդ հայտարար քաղաքականութիւնը կրնայ մեծապէս օգտակար ըլլալ թէ ազգին և թէ տէրութեան: 1886 տարւոյն սկզբն գծելով այն

քաղաքականութիւնը ուժ կը հետեւի Պօլիս Ազգային ժողովն, բացառելով թէ ինչու համար այդ ժողովն ընտրեց Զարուբիւն սրբազան Պատրիարք հայոց և ինչու Ազգային վարչութեան պետ ընտրեց Նուրեան էֆէնդին, հանդերձ ուրիշ էֆէնդիներով, ոչ լինելով Գրան ծառայութեան մէջ, ամեն կերպով կրնային վտանգել նկատուի և ջանալ որ օսմանեան կառավարութեան և հայ ազգին շահերու մէջ կատարել համաբաշխութիւն մը հաստատուի: Ազգային ժողով, Ազգային վարչութիւն, հայոց Պատրիարք անասանելի համբերութեամբ հաւատարիմ մնացին այդ քաղաքականութեան: Զարուբիւն Պատրիարք փութաց ամեն յարաբերութիւն խղի Եւրոպայի հետ, նոյն իսկ դեռ պահաց անգամ շնորհակալական այցելութիւններ զնացաւ Սակայն նոյն այդ Զարուբիւն Պատրիարքը իւր հրաժարականին օրը կը գանգատէր չէվլետի փաշային թէ՛ ի փոխարին իւր և իւր ժողովականաց այլքան հաւատարմական և անձնուիրական ցոյցերու ինքն խայտառակ եղած է յայս ժողովուրդն, վասն զի կառավարութիւնը մինչ իսկ ոչինչ վարդապետ մը Պօլիս բերել տուաւ կը դժկամակեր Զարուբիւն Պատրիարք մի առ մի ցոյց տուած էր, որ իւր պաշտօնավարութեան օրն է ի վեր որքան զքաղաք պարագայներու մէջ կը գտնուէր: Եւ գանգատէիք իմ նախորդէն, կըսէր, թէ՛ անդադար Եւրոպայի կը դիմէ, ամեն ինչը դեռ պահանջներու կը ներկայացնէ, ես ոչ մին ըրի ատենցմէ, սակայն Նուրեան Պատրիարքը ըրած պահանջներուն դէմ մի մասին գոհացում կուտայիք, իսկ ես որ կուզեմ ամեն ինչը օսմանեան կառավարութեան միջոցաւ կարգադրել, իմ ինչընդերս անկողնի կը մնամ:

Զարուբիւն Պատրիարքն այս գանգատները շատ զարմանք կը պատճառէին գլխաւորաբար այն պատճառաւ, որ իւր առ կառավարութիւնն ըրած պահանջներն և ոչ իսկ կարևոր բաներ էին, երկրորդական հարցեր, որոց գոհացում տալով կառավարութիւնը ոչինչ կը կորսնցնէր: Յաւալի էին այս պարագայները, վասն զի 1884—85 թւականներէն յետոյ դանազան արտաքին դէպքեր յուսալիք ըրած էին թիւրքին հայերի օտար ազդերու մասին, և ամենքն ալ կողմէն համարաշխութեամբ աշխատել թրջաց հետ ընդհանուր երկրին բարգաւաճման, գիտնալով թէ մի և նոյն երկրին մէջ ընկող դանազան ժողովրդոց չանցեր մի և նոյն կրնան համարուի: Գժբարդաբար թիւրքիոյ հայը չէին քաջակերպ իրենց այս նպատակին մէջ, բայց այնուամենայնիւ յարատեցին և իրենց յարատեւութեան զգալի ապացոյց մը տուին, ընտրելով այնպիսի ֆաղաքական ժողով մը, որ գլխաւորապէս բաղկացած էր կառավարութեան ծառայութեան մէջ գտնուող անձերէ:

Սակայն վերջի օրերու դէպքերն կը յուսադրեն թէ կառավարութեան քաղաքականութիւնը հայոց նկատմամբ բարեփոխուի, նոյն իսկ կայսեր հրամանաւ:

Ինչպէս գիտեք Սուլթանն Համիդ արդէն մեծ համակրութիւն կը վայելի հայոց մէջ, մասնաւոր Պէշիկշաշի գերեզմանատան խնդրէն յետոյ այդ համակրութիւնը սաստկապէս անեղաւ ժողովուրդը մեծ ուրախութեամբ տեսաւ թէ՛ ինչպէս երկրին վեհապետը շատ բարձր տեսակէտներով նախացաւ ինչորոյն վրայ և ժողովուրդի մը նուրբ զգացումներն յարգեց: Եւ թող չը կարծուի թէ թիւրքիոյ հայ մասուրը, ի հարկէ, ստիպեալ կայսեր դրուատուիք ըրաւ. ոչ, անկող զգացման արտայայտութիւն էր մասուր արտայայտութիւնն: Ոչ սպաքէն նոյն իսկ «Մշակ», որ թիւրքիոյ մէջ չը հրատարակուի, հասարակաց զգացման թարգման հանդիսացաւ և այնքան սքանչելի մարդը ըրաւ տեղ կայսեր ազնուական զգացումներն: Ով կը հարկադրէր «Մշակն» առ այս—Հանրային զգացումն:

Եւ սակայն այդ օրն է ի վեր ոմանք կուզեն ամեն ուրեք տարածել թէ՛ վերջի տարուան մէջ Պատրիարքարանին և կառավարութեան միջև տեղի ունեցած անհամաձայնութեան պատճառը պէտք է որոնել Պէշիկշաշի գերեզմանատան խնդրոյն մէջ: Մի թէ կարելի է այսպիսի ենթադրութիւն մը ընել: Ոչ սպաքէն, այդ ինչորոյն մի քանի օր վերջ Պատրիարքարանն կը շահէր, նոյն իսկ կայսեր կամօք, կարկուտի կարևոր խնդիրը: Մի թէ սպաքայց մը չէր այս, թէ կայսրը ո և է փոքր քրիստոնէութիւն ունենալէ շատ հետի է:

Արդարև ամեն կրօնքի մէջ եթէ կան կէտեր, ոչ կրօնքի հին կը կարգին, կան նաև որ հի-

մունք չեն կարգուի, բայց ժողովուրդ մը անոնց յառեալ է հողով մարմնով: Գերեզմանատան մը համար ինչ որ կուզեն թող ըսեն, մինչև իսկ ըսեն թէ ամենին յարաբերութիւն չունի կրօնքի հետ, և լոկ աշխարհական հանգամանք մը ունի: Պահ մը ընդունենք այս ամենը, բայց իրողութիւն մը կայ, որ ժողովուրդի ամենաստուար մեծամասնութիւնը երկիւղած հաւատով կը նայի այդ գերեզմաններու վրայ: Նախապաշարմունք, կըսեն, մեր հակառակորդը—Լուս, թող այնպէս ըլլայ, բայց ով մեզմէ կը համարձակի վերադառնալ հաւատացելոց զգացումներն, որոց մեք մասնակից չենք: Ազատամիտը կարող են պահք չը պահել կամ եկեղեցի չը գնալ, բայց ով կրնայ խղճի հանդարտութեամբ համարել մը, զիւրացիլ մը առաջ ծաղրել պահքն ու եկեղեցին. ոչ սպաքէն, անհաղուտութեան վերջին ծայրն է այսպիսի ընթացքի մը հետևիլ: Այսպէս ալ է գերեզմանատանց համար: Եթէ եկեղեցականք իսկ համոզուած ըլլան, որ գերեզմանատանը կրօնական հանգամանք չունի, կրնան զայն ըսել ժողովուրդին ժողովուրդը պիտի ըսէ եկեղեցականաց: Կայսրն զար է կըսէիք մեզ թէ գերեզմանատանը եկեղեցւոյ մասն է, մեք կը հաւատայինք, այժմ հարեք թէ եկեղեցւոյ մաս չէ, ուրեմն ինչպէս հաւատանք ձեր միւս ըսածներուն: Եւ այնուհետեւ աշխարհականը պիտի ըսէ եկեղեցականը, եթէ չունենար իսկ ուրիշ, եկեղեցականը կարող չէր գերեզմանատան մէջ կրաւորական դեր մը ստանալ:

Կայսրն ըրեւնեց անմիջապէս այն դժուար ու վտանգ կացութիւնն, յորում կը գտնուէին հայ եկեղեցական և աշխարհականը, ոչ կը վարեն ազգին գործերն, և հրամայեց յարգել ամեն ինչը: Ծառայութիւն: Կայսեր այս ազնուական զգացումներն այնքան լաւ տպաւորութիւն մը ըրին հայոց, որ ալ այնուհետ անհարկն էր, որ թիւրքիոյ հայոց մէջ գտնուէր հայ մը, որ կարենար կայսեր և նորա տէրութեան դէմ շարժելու զգացումն տածել: Ոչ սպաքէն արդէն դանազան պարագաներու մէջ, մասնաւոր կարնոյ բանտարկելոց ազատութեանը, կայսրն զարած էր հայոց սրտերն: Ուրեմն նախարարաց ոչ այլ ինչ կը մը: Նոր ընել, բայց եթէ հայոց այս զգացումն այնպէս լաւ կերպով ուղղել, որ արդիւնաւոր լինի թէ տէրութեան և թէ հայ ազգին, որոյ փոխադարձ շահերն անհամաձայն գտնուելու պատճառ մը չունին:

Վերջի շաբթուան դէպքերն յոյսեր կուտան որ այս ուղիղ քաղաքականութիւնը պիտի տիրապետէ: Կը սպաքէն ժողովուրդն անհամբերութեամբ: Բանի որ ինչորոյն նիւթն այնպէս բերաւ, որ խօսնք գերեզմանաց վրայ, պէտք է ըսենք թէ գանազան անձինք և հրապարակապէս կը ջանան օրինակներով առաջ բերել թէ միշտ ներքի եղած է գերեզմանատաններն պարպել: Ինչ ըսենք: Առաջ բերած օրինակներն ոչ այլ ինչ են: Բայց եթէ մասնական դէպքեր, սուրբի մը, եպիսկոպոսի մը ոսկրաց փոխադրութիւնը, կամ օտար աշխարհի մը մէջ երբ այլ ևս հայ մը չէ մնացած, և ոչ իսկ յիշատակը, գերեզմանատանն ալ տրուած է օտարներուն, ով պիտի պահպանէ այդ գերեզմանատանը:

Սակայն հանդիսարար կերպով փոխել գերեզմանատան մը, որ դեռ մի քանի տարի առաջ թաղում տեղի կուենար, հաղաբար օսկորներ շարժել իրենց տեղէն, այդ անեղ և սարսափելի տեսարանին ոչ ոք կրնայ դիմանալ, և չընդունիլ այսպիսի դէպք մը:

Գերեզմանատաններու նուիրական թէ ոչ լինելու առթիւ երեցաւ նաև յօդուած մը Խովրի «Արևելեան Մամուլ» մէջ: Ամսաթիւրթը դժբաղդաբար ազգային դատին պաշտպան չի հանդիսանար, մի քանի պատասխաններ յիշենք, սակայն հաւանօրէն այդ յօդուածին վրայ ձեր կողմերն ալ խօսուի և հրատարակուի դա, հարկ կը համարել այստեղ առաջ բերի նոյն «Արևելեան Մամուլ»-որ միշտ մի և նոյն խնդարին հրատարակութեամբն է—մէկ յօդուածն Բերայի գերեզմանատան խնդրոյն առթիւ հրատարակուած:

Ահաւասիկ նոյն յօդուած. «Բերայի Հայոց գերեզմանատան խնդրը ծանր կերպարան մը առած կերել: Տէրութիւնը զայն կը պահանջէ, Ազգ. Պատրիարքարանը կը պատասխանէ թէ գերեզմանատաններն ու եկեղեցիներն նուիրական տեղեր են և անհարկ է դանդաղ տալ կամ ո և է ըսնի հետ փոխանակել: Կրօնական սուրբ զգա-

ցումը, կրօնից թողութիւնն և տէրութեան շնորհած արտօնութիւնները թիւրքած են անշուշտ այս պատասխանը:

«Հայը դարերէ ի վեր այս համոզումն ունի որ եթէ ի կենդանոյն աստանդական կը թափառի ամեն տեղը, գէթ երբ մեռնի հանգիստ պիտի ննջէ վայր մը և իւր ոսկորները տեղէ տեղ, իւր մատուռները լեռնէ լեռ չը պիտի փոխադրուին զինքը կառավարող Պետութեան և արդի կրօնական ազատութեան շնորհիւ: Բաւական ժամանակ մեր գերեզմանատանց վրայ այլապէս ժողովուրդներ վէճեր յարուցին, բաւական ժամանակ օտարներ մեր գերեզմանատանց մէջ պառկեցան և ապա անոնց թոռներն մեր հիւրասիրութիւնը չարաչար դործածելով՝ անոնց տիրանալու եղանակը օսմանեան Պետութիւնը մեր սեպականուութեան իրաւունքը ճանչելով անխախտ պահպանեց, ուստի հաւատալի չեղեր որ միմայն հաւատարկային օգտի պատճառաւ ամբողջ ժողովուրդէն մը կը օժտուի և կը օժտուի զգացումը ի շտ պատճառէ:»

«Գերեզմանատան մը քան զտաճարն նուիրական է. զայն բռնաբարել, անոր սպասարկու ժողովրդեան հաւատքը բռնաբարել է, կրօնից ազատութիւնը եղծել է, ըստ որում նոյն կրօնի արտաքին պաշտամանց մէկ մասն է նաև գերեզմանատանը:»

Չեմ կարծեր թէ Պ. Մատ. Մամուրեանի այս հրատարակութեան վրայ բան մը աւելացնել կարելի լինի:

Միայն կարելի է հարցնել, ինչու Պ. Մամուրեան այսպէս կը գրէր Բերայի գերեզմանատան համար, և տարբեր կը գրէ Պէշիկշաշի գերեզմանատան համար:

—Վասն զի այն ատեն Չիւրանոյ գերեզմանատան ոսկորներն հարկ չը կար վրդովելու:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կաթիլի հոգևորականները, ինչպէս հաղորդում են Պօլիս լրագիրները, պատրաստութիւններ են տեսնում մի բարձրագոյն վարժարան հիմնելու Տիգրանակերտի մէջ յատկապէս հայերի համար:

—Տրամախական լրագրութիւնը վերջին ժամանակները մի առանձին կերպով շեշտեց Պօլիս ուղարկած մի հեռագրի վրա, այդ հեռագրը հաղորդում էր, որ Բ. Գուռը մտադիր է գերմանացի կառուցողներին հարկ տուելու ֆորթ-Ասիայի և Հայաստանի զանազան նահանգներուն: Թէ որքան ճիշդ է այդ լուրը,—որոշ ասել չենք կարող. յայտնի է միայն, որ իշխան Բիսմարկ անմիջապէս գործ է դնում թիւրքիայում ամենից շատ ազդեցութիւն ունենալու, և ֆորթ-Ասիայի ու Հայաստանի մէջ գերմանացի կառավարիչներ նշանակելը՝ անկի մեծ օգնութիւն կարող է անել գերմանական քաղաքականութեան զօրանալուն Արևելքում, քան թէ թիւրքաց զօրքերի համար գերմանացի օգնութիւնը նշանակելը, որ արդէն վաղուց ընդունված է Բ. Գրան կողմից:

—Գերմանիայի կառավարութիւնը 15 միլիոն մարկ յատկացրեց Էլզասի մէջ երկաթուղային մի քանի գծեր կառուցանելու համար, որոնք զԷլզասը պատկազէս ռազմաքիտական նշանակութիւն պէտք է ունենան:

—Կոմս Անդրայի վերջին ժամանակներում զիպլոմատական շրջաններում ունեցած իր խօսակցութիւնների մէջ այն միտքն է յայտնում, որ բոլորական հարցը կարող է վերջնականապէս լուծվել նոյն իսկ խաղաղ ճանապարհով:

—Կորուստի պրինցի մայրը, զքսուհի կլեմենտինա, ինչպէս երևում է, բաւական մեծ դեր պէտք է կատարէ Բոլզարիայի պատմութեան մէջ. գոնէ այդպէս երևում է եւրոպական լրագիրներից շատերի խօսքերից, որոնք վերագրում են Ֆերդինանդի մօրը քաղաքական և զիպլոմատական գործունէութիւն. այդպէս օրինակ, սրանից մի քանի ժամանակ առաջ մի քանի գերմանական լրագրից հաղորդեցին, որ զքսուհին մտադիր է Կ. Պօլիս դնալ բոլորական գործերի առիթով: Այդ լուրը այժմ հերքվում է:

—Տրամախական պատգամաւորների ժողովում քննվեցաւ 1888 թիւ պետական ընդժէտը. դիւորական ծախսերի և պատերազմական անհրաժեշտ ձեռնարկութիւնների համար որոշված գումարը հասնում է 2,243,833,282 ֆրանկի:

—Էլզաւ-Վօթարինդիայում գերմանական կառավարութեան կարգադրութեամբ շարունակվում է այն արտակարգ միջոցները գործադրութիւնը, որոնց նպատակն է արգելել Փրանսիական պրօպագանդային այդ նահանգներում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքի լրագիրներում կարգում ենք Վրոնցայում նորերում վաճառանկեցաւ տեղական նահանգական դատարանի անդամ Կ., որը հոգեպէս հիւանդ էր: Հանգուցեալը առանձնացած էր ապրում և շատ վատ էր. նա իր մահից յետոյ նշանաւոր կարողութիւն թողեց թէ փողով և թէ զանազան իրերով մօտ քառասուն հազար ռուբլի արժողութեամբ: Ծառանցութիւնը ստանալու համար Պետերբուրգից եկան նրա հետո ազգականները և սկսեցին վաճառել հանգուցեալի իրերը: Անուշաքիտ ներկայ էին թէ գնորդները և թէ բազմաթիւ հասարակութիւն, որոնք հետաքրքրվում էին այդ անուշաքիտի յատկութիւն և հին լրագիրների մի ամբողջ հակ. հրէայ գնորդ առաջարկում է լրագիրների համար 20 կոպէկ, վաճառողը մի ռուբլի է պահանջում: Գնորդ յամառութեամբ համոզում է վաճառողին 20 կոպէկով գիշանել, վաճառողը բարկացած խլում է հրէայի ձեռքից լրագիրների կապոցը, պղծում է անկիւնը, լրագիրները կապոցից դուրս են թափվում, և նրանց մէջ հարկւր ռուբլիանոց թղթադրամ է երևում: Արտում են ջոկել լրագիրների համարները և համարեա նրանց իւրաքանչիւրի մէջ գտնում են հարկւրանոցներ: Երբ հազար ռուբլուց աւելի գտան այդ լրագիրները մէջ: Կարող էր երևակայել ժլատութիւն անող գնորդ յուսահատութիւնը: Մի ուրիշ շարժի-հրէայ կամուսում է մի վերաբերու գնել և համոզեցուցիչ կերպով խնդրում է 8 ռուբլուց 50 կոպէկ պակասեցնել: «Վաւ, փողը մի՛ճարիր, և կորիր», ասում է վաճառողը: Բայց հրէան չէ շտապում, կրկին սկսում է շուտապէս վերաբերու, խնդրելով էլի 50 կոպէկ զիջանել: Հրէան ձեռքը կոխեց վերաբերու մի դրամանը, հանեց և ասում մնաց. ձեռքում երևաւ հարկւրանոց թղթադրամ: Իսկոյն, ի հարկէ, խլեցին նրանից թէ փողը և թէ վերաբերու: Չորս դրամաներից իւրաքանչիւրում գտան փողները, բոլորը մօտ 70 ռուբլ: Գնորդ հառաչում և բարկանում է իր յիմարութեան վրա: Աւարկաների թուում իրանց վրա ուշադրութիւն էին դարձնում գրիչներով հարկւրաւոր արկղիկներ: Պատմում են որ հիւանդը, խանութում գնելով բոլոր (ինչպէս նա կարծում էր) գրիչները, ասում էր զատարանում. «այժմ պրծաւ, ոչ մասնաւոր, և ոչ բողբոջ գանգամներ ոչ որ չի գրի»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Պետերբուրգ, 27 յունվարի: Զինուորական վարչութեան յունվարի 26-ին տուած Բարձրագոյն հրամանով, գլխաւոր շտաբի շտաբ-օֆիցերները նշանակված են տեղական զորաբաժինների գլխաւորների վարչութիւններում:— Իշխան Բիսմարկի ճառի աւիթով՝ «Journal de St. Pétersbourg» լրագիրը ասում է. «Նոյն իսկ հեռագրական տեղեկութիւնների հիման վրա, կարելի է ըմբռնել իշխան Բիսմարկի արտասանած ճառի նպատակը. գերմանական կանցլեր տախտակը ձեռքից բաց չը թողցն հաստատելու, որ ինքը բողբոջին նպատակ չունէր ճնշում գործելու պարլամենտից պահանջվող փոխառութեան հաստատութեան վրա, այլ միայն բացատրութիւններ տուեց Եւրոպայի ընդհանուր դրութեան վերաբերութեամբ: Այդ բացատրութիւնները կարծէք իրանք իրանց էին առաջ դալիս, այն պարզաբանութիւնների պատճառով, որոնք արտայայտվեցան 1879 թվի դաշնագրի մօտիկ հրատարակութեան աւիթով: Մենք կարծում ենք, որ նախագծած նպատակը իրագործված է. իշխան Բիսմարկը չեղտեց այդ դաշնագրի բացառապէս պաշտպանողական բնաւորութեան վրա: Այդ էական կէտն է, որովհետեւ այդ դաշնագիրը ծածկող դադարիքի պատճառով, առաջվայ նման կարող էր այն համարվուած լինել, թէ հարկաւոր դէպքում այդ դաշնագիրը կունենայ յարձակողական բնաւորութիւն, իսկ յայտնի դէպքերում զրգուղող կըրերը կարող էին այդ ենթադրութեան մէջ փոփոխուել կերպով կերպուոր գտնել: Երբովհետեւ դրա հետ միասին իշխան Բիսմարկի հինգ իրան պատիւ բերող խօսքերով՝ անպայման հաւատ արտայայտեց դէպի Ռուսաց կայսրի խօսքը, որի խաղաղարկական մտադրութիւնների մասին բացարձակապէս յայտարարվեցաւ:— Ուստի կարելի է եղբակացնել, որ խաղաղութեան պահպանութիւնը ապահոված է հաստատուն հիւրերի վրա: Պէտք է յոյս ունենալ, որ այդ բանը ընդ-

հանուր թեթեւութիւն կը լինի ամբողջ Եւրոպայի համար: Իսկ ինչ մեզ է վերաբերում, մենք այդ խաղաղարկական գրաւականը գերադասում ենք նրանից, որը բղջում է անդադար անող այն սպառազինութիւններից, որոնցով յափշտակվում են: Մենք չենք պնդել դրա վրա, որովհետեւ իշխան Բիսմարկի հաստատեց, որ իւրաքանչիւր պետութիւն կատարեալ իրաւունք ունի, իր սեփական սպահովութեան համար պահանջան կանգնեցնել իր սեփական զինուորական ուժերը: Խոյս ենք տալիս նոյնպէս և վերադառնալու այն ծառայութիւններին, որ փոխադարձաբար ցոյց են տուել Ռուսաստանը և Պրուսիան: Մեր կարծիքով այդ ծառայութիւնները հետեանք էին շատ անգամ միմեանց հանդիպող շահերի: Պետութիւնների մէջ յարաբերութիւնների համար այդ ամենայաւ հիմքն է, և մենք կը շարժուորենք մեզ, եթէ ապագայումն էլ դրա վրա կը հիմնվին մեծ Գերմանայի և Ռուսաստանի յարաբերութիւնները:— «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ գարնանը հաղորդակցութեան ճանապարհների միմիտրը, ինժեներների ուղեկցութեամբ, կը ձեռնարկի մի շրջակայութիւն, քննելու երկաթուղային և նաւահանգիստների շինութեան աշխատանքները: Ջրային ճանապարհները բաւարարու վերաբերեալ աշխատանքները քննելու համար մի-նիտորը կը ճանապարհորդի Վոլգայով և Գնէպրով:

ՄՅՅԻՄ, 27 յունվարի: Պրինց Ֆերդինանդ և նրա մայրը վերադարձան իրանց ճանապարհորդութիւնից:

ՓԱՐԻՉ, 27 յունվարի: Կիսապաշտօնական «Temps» լրագիրը ասում է, որ ոչոք չէ կասկածում, որ իշխան Բիսմարկ անկեղծօրէն ցանկանում է խաղաղութեան պահպանութիւնը, ըստ որում խաղաղութիւնը— դա կը նշանակէ պահպանել պետութիւնների ներկայ սահմանները. դրանից աւելի ինչ կարող է ցանկանալ Գերմանիան:

ԲԵՂԻՆ, 27 յունվարի: Բէյլստաղը, առանց առաքիւղութիւնների, երկրորդ ընթացանութեան մէջ ընդունեց զինուորական օրինապիճը ամբողջութեամբ:

ՓԱՐԻՉ, 27 յունվարի: Գառաւաստական ըննիչ Ատալիին եզրակացութեան համաձայն, Վլիստն դատի է կանչված՝ Լըզրանին և Կրեմլին շքանշաններ տալու գործի պատճառով: Գործի քննութիւնը տեղի կունենայ 4/16 յունվարի:

ՎԻԵՆՆԱ, 27 յունվարի: Աւստրիական ընկալարտի պատրաստուողները ժողովը, ձայների նշանաւոր մեծամասնութեամբ, ընդունեց աւստրօ-իտալական առևտրական պայմանագիրը:

ՄՍՍԿՎԱ, 27 յունվարի: Մօսկովայի համալսարանում դասախոսութիւնները սկսվեցան երէկ բոլոր ֆակուլտետներում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունվարի: Ուսումնական պարագմունքները Ողէտայի համալսարանում սկսվելու են 29-ին յունվարի: «Гражданин» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգի ռուս կապիտալիստները կազմում են առևտրական արագընթաց կրէյսերների մի ընկերութիւն: Ընկերութեան նըպատակը նոյն է, ինչպէս և կամաւոր նաւատորմի նպատակը, միայն հիմունքները ուրիշ են: Նոյն լրագիրը հաւատարմում է, որ անտառային տնտեսութեան ծրագրի քննութիւնը պետական խորհրդի մէջ յետաձգված է անորոշ ժամանակով:

ՍԱՆՐԷՄՈ, 28 յունվարի: Գերմանական թագաժողովին չնչառութիւնը այն ատիճան ժանր է դարձել, որ բնիկները վճռեցին անպատճառ կատարել տրախտօտօմիայի օպերացիան:

ԲԵՂԻՆ, 28 յունվարի: Սկզբնական ընտրութիւնները սկսուելուց յետոյ համար կը կատարվին փետրվարի վերջերին: Միմիտրութիւնը խոստանում է ոչինչ վարչական ճնշում չը գործադրել ընտրողների վրա: Աղատամիտ կուսակցութեան կայացած ժողովի ժամանակ Բիստիչ այն միտքը արտայայտեց, որ Սերբիայի, Ռումինիայի և Բոյգարիայի մէջ դաշնակցութիւնը կարող է միմիայն ապահովանել թէ խաղաղութիւնը արևելքում և թէ բալկանեան պետութիւնների քաղաքական և կրօնական անկախութիւնը:

ՎԻԵՆՆԱ, 28 յունվարի: Չը նայելով կիսապաշտօնական հերքումներին, այստեղ հաւատացած են, որ Ռումինիայի արտաքին գործերի մի-նիտոր Մորուզայի ճանապարհորդութիւնը նպատակ ունի միացնել և Ռումինիային երկը պետութիւնների դաշնակցութեան հետ:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԻՍԱՀԱԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, ՍԻՐՈՒՀԻ ՍՏՖՈՒՆԵԱՆ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻՍԱՀԱԿԵԱՆ ԾՈՎԻԱՆԵԱՆՆԵՐԸ արտի ցաւով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր որդու, երկրորդը՝ ամուսնու և վերջինը եղբոր, ԲԱԳՐԱՏ ԻՍԱՀԱԿԵԱՆ ԾՈՎԻԱՆԵԱՆԻ մահը:

Ամբիճքը կը կատարվի շաբաթ, ամիս 30-ին, երեկոյան ժամը 6-ին, իսկ յուրարկաւորութեան հանդէսը կիրակի 31-ին, առաւօտեան ժամը 10-ին իր սեպհական տանից (Նաբերեժնայա և Կիրոնայա փողոցի անկիւնում), դէպի Թանգոյնայ սուրբ Աստուածածին եկեղեցին:

1—1

ԱՐԱՔՍԻ

բաժանորդագրութիւնը շարունակվում է: Երկու պատկերազարդ գրքի գինն է 3 ռուբլի, իսկ իւրաքանչիւրինը 2 ռ. 50 կոպէկ: Տեղիս տպարանի հայերէն տառերը արգէն բռնված լինելով՝ երկրորդ գրքը հրատարակել կը կարողանանք միայն ապրիլին: Գինը հետեւեալ հասցեով: Петербургъ, Симеону Гуламираяцу, Графскій переулокъ 7. 22.

1—1

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ ԵՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՀԱԻՈՐՎԱԾ ՍԵՆԵԱԿՆԵՐ

գիները Տեր-Աստուրովի տանը, Երևանեան հրապարակի և Միջին-Փողոցի անկիւնում, որտեղ առաջ գտնվում էր Թիֆլիսի Առևտրական կլորը:

1—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգըշաբթի, փետրվարի 4-ին, ՄԵՅՈՋ (MEUSE) շոգենաւոր, նաւապետ ԹԻԲԱԼ (THIBAL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրգու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում՝ Լէմոյուրի տան, Նաբերեժնայա, և Թիֆլիսում՝ պ. Բէնօին, նախկին Արժուրի գալլերէում, № 103.

4—4

Արգէն ծախվում են կատարեալագործված, սպիտակ բոցով, անվտանգ **ՇՎԷԴԱԿԱՆ ԼՈՒՑԻԿՆԵՐԸ** ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆՈՎ:

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱԻՈՐ ՋԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ: Գործարան Գ. Ա. ՏԵՐ-ԱՍՏԱՑՈՒՐԵԱՆԻ և ընկերութեան, Թիֆլիսում, Վերս կոչված թաղում:

16—50

ՎԷՆԵՆԻՃԻ, ԶՄՈՒԹԻ ԵՒ ՓԱՅԼԱՆԵՐԿԻ ԿՈՎԿԵՍԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Սրանով պատիւ ունի յայտնելու պ. պ. առևտրականներին և վէճիճի (լակ), դմուռի և փայլաների (պոլիտուրա) գործածողներին, որ ունի յիշեալ տարանքների բոլոր տեսակները, որոնք յետ չեն մնում միւս գործարաններից, ինչպէս իրանց մասշէլի գնով, այնպէս էլ իրանց լաւ յատկութեամբ: Պատուէրները ընդունվում և կատարվում են անմիջապէս:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴԱՐՍԵԼ ԵՒ ԿԱՊԵԼ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԱՄԵՆԱՅՆ ԽՆԱՄԲՈՎ ԳՈՐԾԱՐԱՆԱՊԵՏԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՆԵՐԲՈՑ: Մանրամասն պայմանները նշանակված են պրէյս-կուրանտի մէջ, որը տրվում է ուղարկվում է ձրիաբար: Օտարաքաղաքացիների պահանջները կատարվում են ամենայն ճշգրտութեամբ և անյապաղ: Գործարանը և պահեստը գտնվում են Ելիզավիտինսկի փողոցի վրա, տուն Զիմարեանի, № 25: Հասցէն. Тифлисъ, Самуилю Леонтевичу Ходорскому.

8—20 (Շ)

Լոյս տեսան պիանոի համար կազմած՝ ԱՆԳՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԺՈՂՈՎՐԻԱԿԱՆ ԵՐԳԵՐ ԵՒ ՊԱՐԵՆ՝ (Trans-Kaukasische Volkslieder und Tänze) **ՆԻԿՈՂ ԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ:** Գինն է 1 ռ., վաճառվում են Թիֆլիսի կրաժտական մագաղաններում՝ ՍՈՒՋԱՆԱՅԵԱՆԻ և ԼՍՆԿՈՑԻ:

2—5

ՄԻ ՀԱՅ, որ առաջ վաճառական է եղել Թիֆլիսում և ծանօթ է Թիֆլիսցիներից շատերին, գինում է այժմ տեղիս վաճառականներին, խնդրելով որ և է պաշտօն տալ իրան, մի վաճառատան, խանութում, կամ գրասենեակում:

Հասցէն իմանալ՝ Մշակի՝ խմբագրատանը:

3—3

ԳԱՐՄՈՆԻԿԱՆԵՐԻ ՆՈՐ ԲԱՑՎԱԾ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ

Վ. Գ. ԳՐԵՅՈՎԻ, Տուրա քաղաքում, մեծ մրցման դիմանալով, նշանակում է շատ է-ժան գներ: Ցանկանալով միջոց տալ օտարաքաղաքացի մանր առևտրականներին ստանալ գարմենիները առաջին ձեռքերից, ուղարկում է նրանց այդ գործիքները գրաւոր պահանջման համեմատ, փոքր քանակութեամբ, բայց ոչ պակաս քան 25 ռուբլու գումարի: Պահանջները առանց բեհէ 15% չափով, չեն կատարվում: Գները 13 կոպէկից մինչև 10 ռուբլի:

Հասցէն. Тула, улица Веневская, д. Рылѣвой, В. Д. Грецову.

2—3 (Շ)